ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

03-ը հունիսի 2019թ.
Ժամը 11^{00}

ք. Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ առաջատար մասնագետ Վ. Ղազարյան,

հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/26» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած «Հայանտառ» ՊՈԱԿ-ը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.***

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը (**Հավելված 6)-ը** և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (**Հավելված 6.1)-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/26» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **«Հայանտառ» ՊՈԱԿ-ի** կողմից ներկայացված շտկուման քննարկման վերջնաժամկետի հաջորդ օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Մուրադյան
Գնահատող		Ա. Պապյան
Գնահատող		Վ. Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Ա. Մաղաքյան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

05 -ը հունիսի 2019թ.
Ժամը 12[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ առաջատար մասնագետ Վ. Ղազարյան,

հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/26» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. **«Հայանտառ» ՊՈԱԿ-ի** կողմից ներկայացված շտկումների քննարկման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված շտկումների քննարկման մասին.

(Ա. Մաղաքյան)

1. **«Հայանտառ» ՊՈԱԿ-ի** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվեցին առկա անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **«Հայանտառ» ՊՈԱԿ-ի** կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ **Հավելված N 6-ը** (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և **Հավելված 6.1-ը** (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) գնահատել գնանշման հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **«Հայանտառ» ՊՈԱԿ-ի** կողմից ներկայացված հրավերով պահանջվող փաստաթղթերը և տեխնիկական բնութագիրը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/26» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, **անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/26» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Վ. Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան